

## Հրահանգ գրուցավարին

### Ընդհանուր պահանջներ

• Մինչև հարցաթերթիկը ցույց տալը և հարցունը սկսելը գրուցավարը պետք է նախ հարցվողին ներկայացնի հետազոտության նպատակը, տեղեկատվություն տրամադրելու հարցվողի չափը և տեղեկատվություն այն մասին, թե որտեղից հարցվողը կարող է տեղեկանալ հետազոտության վերջնական արդյունքների հետ:

Այսպես պետք է ասել, որ սույն հարցման նպատակն է «Ձեզ հուզող խնդիրների բացահայտման, երկրում վարվող տնտեսական, քաղաքական կյանքին տրվող Ձեր գնահատականների հիման վրա մշակել դրանց արդյունավետ լուծման եղանակներ: Ծրագրի հեղինակները ամենայն ուշադրությամբ հաշվի կնստեն Ձեր տեսակետների հետ: Արդյունքները կներկայացնեն բնակչության ընդհանրական կարծիքը: Ձեր անձնական տվյալները հրապարակման ենթակա չեն: Ամփոփ տվյալների մասին կարող եք տեղեկանալ [www.crrc.am](http://www.crrc.am) էջից»:

• Հարցվողի մասնակցելու համաձայնությունը ձեռք բերելուց հետո գրուցավարը օգտագործելով իրեն տրամադրված աշխատանքային հանձնարարականում բերված տվյալները՝ տնային տնտեսության իդենտիֆիկացիոն համար, հարցաթերթի համարներ, մարզի և համայնքի կոդեր, կլաստերի համար, հարցման միավորների հիմնականի ու պահուստայինի տարանջատում, գրուցավարի և տրամաբանական ստուգողի կոդեր, նախ պետք է լրացնի հարցաթերթիկի տիտղոսաթերթը:

• Այնուհետև գրուցավարը պատասխան պահանջող յուրաքանչյուր հարցի համար նախանշված տեղում ճշգրիտ կերպով և միայն գրիչով պետք է գրանցի հարցվողի պատասխանները: Հարցաթերթիկը լրացնելիս գրուցավարը չպետք է հարցաթերթիկի հարցերի վերաբերյալ մեկնաբանություններ անի: Զրուցավարը չպետք է հարցվողին հուշի պատասխանի տարբերակ կամ որևէ այլ կերպ ազդի պատասխանի նրա ընտրության վրա: Եթե հարցվողը հարցը չի ըմբռնել պետք է նորից ավելի դանդաղ այն կարդալ: Զրուցավարը հարցաթերթիկում պատասխանների տարբերակները պետք է նշի կամ գրի մաքուր, ընթերցելի: Ձնջում կատարելու անհրաժեշտության դեպքում պետք է հին գրվածի վրա գիծ քաշել կողքին նորից մաքուր գրել:

• Հարցաթերթիկում գրուցավարին ուղղված հրահանգները չպետք է բարձրաձայն կարդալ:

• Հարցի դիմաց տեղադրված վանդակի պարագայում վանդակում գրվում է հարցվողի կողմից ընտրված պատասխանի համարը (կողը): Եթե հարցի հատվածում և տող, և վանդակ կա, լրացվում է միայն վանդակը: Եթե վանդակ չկա, գրառում կատարվում է տողի վրա:

• Եթե հարցվողի պատասխանը թվարկված տարբերակներում բացակայում է, ապա «Այլ» տարբերակի առջև դրված համարը (օր, 7 կամ 5 ) նշվում է կողի համար հատկացված վանդակում, իսկ հարցվողի կողմից առաջարկված տարբերակը գրառվում է «Այլ»-ին \_\_\_\_\_ տրամադրված բաց տողին:

• Ռեսպոնդենտի կողմից հարցին պատասխանելուց հրաժարվելու բոլոր դեպքերում (</Պ) գրուցավարը կոդավորման համապատասխան վանդակում դնում է «99» կողը, իսկ «չգիտեմ» կամ «դժվարանում եմ պատասխանել» (Ղ/Պ) պատասխանների դեպքում՝ «98» կողը: Որոշ հարցերի հարցադրումը որոշակի ռեսպոնդենտների համար կարող է կիրառելի չլինել, նման բոլոր դեպքերում հարցաթերթում առկա է հատուկ նշում «97»՝ «կիրառելի չէ» կողի կիրառման հնարավորության մասին:

- Եթե հարցը մեկից ավելի պատասխանի իրավունք է տալիս՝ հարցվողի կողմից տրված պատասխանները նշվում են ըստ կարևորության, սկզբում նրա համար առավել կարևորը, հետո երկրորդը և այլն:
- Հարցաթերթիկում սլաքներով նշված անցումների պարագայում, որոշակի պատասխան ստանալիս զրուցավարը պետք է անցում կատարի սլաքի կողքին նշված հարցին կամ բաժնին՝ բաց թողնելով այդ հարցի և սլաքով նշված հարցի միջև ընկած մյուս հարցերը:
- Հարցաթերթիկում գրված «Պատասխանները չկարդայ» ցուցումի դեպքում զրուցավարը կարդում է միայն հարցը, իսկ հարցի տակ թվարկված պատասխաններից նշում այն մեկը, որը արտաբերել է հարցվողը:
- «Պատասխանները կարդայ» ցուցումի դեպքում զրուցավարը պատասխանները պետք է անպայման բարձրաձայն կարդա:
- «Համայնքի տիպը» գրառման համար նախատեսված վանդակում 1 թվով նշել քաղաքը, 2-ով՝ գյուղը:

Այլուսակների լրացման կարգը  
Օրինակ՝

H.5. Ինչ խմիչքներ եք օգտագործում և ինչ հաճախականությամբ.

I Խմիչքի տեսակը	II Կոդ	Կոդ			
		III Ամեն օր	IV Մի քանի օրը մեկ	V Միայն հանգստյան օրերին	VI Միայն տոներիին
Թունդ խմիչքներ (օղի, կոնյակ և այլն)	1	1	2	3	4
Չինի, շամպայն	2	1	2	3	4
Թույլ խմիչքներ (գարեջուր և այլն)	3	1	2	3	4

Հարցվողի կողմից խմիչքի տեսակի (Թունդ խմիչքներ, Չինի, շամպայն կամ Թույլ խմիչքներ) ընտրությունը նշելու համար, օղակի մեջ է վերցվում երկրորդ սյունակի համապատասխան կոդը: Խմիչքների օգտագործման հաճախականությունը նշելու համար արդեն ընտրված խմիչքի տողում (այս դեպքում՝ թունդ խմիչքներ և թույլ խմիչքներ) երրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ սյունակներում նշվում է համապատասխան կոդ: Նշված սյունակներում մեկ տողի վրա չի կարող 1-ից ավելի նշում լինել:

Կիսատ կամ կոպիտ սխալներով լրացված հարցաթերթիկները չեն մտնի ընդհանուր հաշվարկի մեջ և հարցվողը պետք է կրկնակի հարցման ենթարկվի:

## Մասնավոր հիշեցումներ հարցերի վերաբերյալ

### Հարց A1

Տնային տնտեսության մեջ մտնում են անձիք, ովքեր քնակվում են միասին, վարում են միասնական տնտեսություն և ունեն միասնական բյուջե: Առաջին հերթին պետք է նշել տնային տնտեսության գլխավոր անդամին (անկախ նրանից, նա հարցմանը ներկա է, թե ոչ), ապա նրա կնոջը (ամուսնուն), նրանց երեխաներին և տնային տնտեսության մնացած անդամներին (հյուրերին չթվարկել): Այսպիսով, բոլոր թվարկված անդամները գրանցվում են ելնելով տնային տնտեսության գլխավոր անդամի հետ ունեցած բարեկամական կապից: Տնային տնտեսության անդամի համարը նշել առաջին սյունակում և շարունակել այդ նույն տողում նշել այդ անդամին վերաբերվող բոլոր տեղեկությունները: Այնուհետև անցեք երկրորդ տողին՝ նույն ձևով նշելով հաջորդ անդամին վերաբերվող տեղեկությունները:

Ծննդյան տարեթիվը գրել ամբողջովին (1975, ոչ թե 75):

### Բաժին D. Դեմոգրաֆիա

Հարց D1 Հարցի դիմաց տեղադրված վանդակում գրել հարցվողի կողմից ընտրված պատասխանի համարը:

Հարց D.2 Եթե հարցվողի պատասխանը թվարկված տարբերակներում բացակայում է, ապա «Այլ» տարբերակի առջև դրված համարը (7) գրվում է վանդակում, իսկ հարցվողի կողմից առաջարկվածը գրառվում է «Այլ»-ի \_\_\_\_\_ մոտ տրամադրված տողին:

Հարց . D 5. Վանդակում հատկացված տեղում գրել հարցվողի կողմից ընտրված «Այո» կամ «Ոչ» տարբերակի առջև գրված թիվը:

Հարց D7 Տարեթիվը գրել ամբողջությամբ:

Հարց D10 \_\_\_\_\_ Ռեսպոնդենտը քարտի օգնությամբ ինքն է որոշում իր կարգավիճակը՝ մասնավորապես այն թե ինքը տնային տնտեսուհի է, թե պարզապես սեփական ընտրությամբ չաշխատող և աշխատանք չփնտրող:

Եթե այս հարցի «Այլ»ի մեջ որպես զբաղմունք գրվում է աշխատանքի մի որևէ տեսակ, որը ցանկում չկա ընդգրկված, ուրեմն պետք է անցում կատարել դեպի *D 13*:

### Բաժին E . Կրթություն

Հարց E2 Ետբուհական կրթության մեջ մտնում են ասպիրանտուրան և մագիստրատուրան: (Բակալավրիատից բարձր մակարդակում սովորողներ):

Հարց E7 Խոսքը գնում է միայն մասնագիտական վերապատրաստման, վերաորակավորման դասընթացների մասին, և ոչ թե հոբբիների կամ հաճույքի համար հաճախած դասընթացների մասին:

### Բաժին M. Էմիգրացիա

Հարց M1 Նախատեսած վանդակում գրվում է «Այո» կամ «Ոչ» պատասխանների համարը նայած, թե որն է հարցվողը ընտրել:

Հարց M 2. Ընտանիքի էմիգրացված անդամների համարները պարտադիր կարգով պետք է լինեն նույնը ինչ Հարց A1-ում նշված համարները:

Հայր M 3 Համապատասխան վանդակում գրառել տվյալ երկրի անվանումը:

Հայր M 4 Խոսքը գնում է բնակության այս կամ այն օրինական հիմքի մասին, օրինակ՝ «Գրին քարդ», «Սպիտակ քարդ», «Կացության կարգավիճակ» (вид на жительство)

Հայր M 6 «Անառողջ բարոյափոփոխման անվանումը» պատասխանի տարբերակը վերաբերվում է երկրում տիրող անվտանգության, կաշառակերության մթնոլորտին, նյութական վիճակների բնեռացման մասին, քաղաքական լարվածությանը և այլն:

Հայրեր M 13, 14, 15 Այս հարցերի համար օգտագործվում են M15 հարցում գետնի վրա պատասխանների տարբերակները, որոնցից հարցվողի կողմից ընտրվածի առջև դրված թիվը գրառվում է աջ մասում հատկացված վանդակում:

Հայրեր M 16, 17, 18 Այս հարցերի համար օգտագործվում են M18 հարցում գետնի վրա պատասխանների տարբերակները, որոնցից հարցվողի կողմից ընտրվածի առջև դրված թիվը գրառվում է աջ մասում հատկացված վանդակում:

## Բաժին H. Առողջապահություն

Հայր H.1. Վանդակում հատկացված տեղում գրել հարցվողի կողմից ընտրված «Այո» կամ «Ոչ » տարբերակի առջև գրված թիվը

Հայր H.2. Տարիքը գրել վանդակի մեջ

Հայր H.3 Վանդակում հատկացված տեղում գրել հարցվողի կողմից ընտրված «Այո» կամ «ոչ » տարբերակի առջև գրված թիվը

Հայր H.3.2 Տարեթիվը գրել ամբողջությամբ, ոչ թե 02, այլ 2002

Հայր H5 «Միայն հանգստյան օրերին» գրառումը նշանակում է հազվադեպ, միայն հատուկ առիթներով՝ շատ հազվադեպ: Եթե հարցվողը պատասխանում է, որ խմիչքի ոչ մի տեսակ չի օգտագործում ուրեմն՝ աղյուսակում ոչ մի լրացում չի կատարվում:

Հայր H.7. Պատասխանի համար ընդգծվում է երկրորդ և երրորդ սյունակների կողերը: Յուրաքանչյուր տողում անպայման մեկ նշում պետք է լինի

Հայր H.8. Եթե Հայր H.7. – ում ռեսպոնդենտը պատասխանում է, որ սպիդ հիվանդության մասին չի լսել, ապա տվյալ հարցի համար պատասխան չի ստացվում, հակառակ պարագայում լուրաքանչյուր տողի համար ստացվում է առանձին պատասխան և օղակի մեջ է առնվում երկրորդ, երրորդ և չորրորդ սյունակներից մեկի համապատասխան կողը: Յուրաքանչյուր տողում անպայման մեկ նշում պետք է լինի:

Հայր H.8.1 Այն ռեսպոնդենտների համար որոնք Հայր H.8.- ին չեն պատասխանել տվյալ հարցը հնչեցնել հետևյալ կերպ. «Ինչ ճանապարհով են փոխանցվում սեռավարակները» և գրառումը իրականացնել նույն սկզբունքով, ինչ նախորդ հարցը: Մնացած բոլոր դեպքերում աշխատել այնպես ինչպես պահանջում է հարցաթերթը:

Հայր H.9 Հայր H.7. – ում սպիդ հիվանդության մասին «չեմ լսել» պատասխանած ռեսպոնդենտների համար այս հարցի առաջին տողը չկարդալ, ու պատասխան չնշել: Մնացածների համար ստանալ ու արձանագրել բոլոր տողերի բոլոր երեք ենթահարցերի պատասխանները: Արվանդուլ-гомосексуалуст, թմրամուլ-наркоман:

Հայր H.10. Պատասխանները կարդալ տող առ տող, եթե հարցվողը տվյալ գործունեությունը ընդհանրապես ընդունելի չի համարում անկախ տարիքից, համապատասխան տողում որևէ սյունակում նշել 88 կողը.

Հայր H.11. Զրուցավար. պատասխանները կարդալ տող առ տող և դիմացը թվերով նշել հաճախման քանակը.

Թերապևտ - ներքին հիվանդությունները դեղորայքով բուժող մասնագետ
Պրոկտոլոգ - աղիքային հիվանդությունների մասնագետ
Ուռուլոգ - միզասեռային օրգանների մասնագետ
Մարդաբան (Անդրոլոգ) - մարդաբանական շեղումների մասնագետ` աճի, ոսկորների, չափերի
Գաստրոէնթերոլոգ - աղեստամոքսային տրակտի օրգանների մասնագետ` ստամոքս, ենթաստամոքսային գեղձ, լյարդ, լեղապարկ
Էնդոկրինոլոգ - ներզատիչ գեղձերի մասնագետ` հիպոֆիզ, վահանագեղձ, մակերիկամ, ձվարան
Դերմատոլոգ - մաշկաբան
Վնասվածքաբան (Օրթոպեդ) - ոսկրային, հողա-ոսկրային համակազմի շեղումների մասնագետ
Ֆտիզիատոր – թոքաբանության մեջ նեղ մասնագիտացում` տուբերկուլյոզի մասնագետ

### Բաժին P. Քաղաքական Վարք/ հայացքներ

Հայոց P.1. և P.2. Նախատեսած վանդակում գրվում է այն պատասխանի համարը, որն ընտրել է հարցվողը:

Հայոց P.3. Պատասխանները աջ սյունակում համարակալել ըստ կարևորության, 1, 2, 3, 4, 5 և այլն: Օրինակ` առավել կարևոր աղբյուր- 1, երկրորդ կարևոր աղբյուր-2 և այդպես շարունակ:

Հայոց P.4. Վանդակում հատկացված տեղում գրել հարցվողի կողմից ընտրված «Այո», «ոչ » և կամ «Հրաժարում» տարբերակի առջև գրված թիվը:

Հայոց P.10. Տվյալ հարցում հարցվողը պետք է ըստ կարևորության աստիճանի դասակարգի գրուցավարի կողմից հնչեցվող ոլորտները և աղյուսակում նշում կատարի հետևյալ սկզբունքով` 1-առավել կարևոր, 4-նվազ կարևոր:

Հայոց P.11. Վանդակներում գրել հարցվողի համար առաջին հերթին, երկրորդ հերթին և երրորդ հերթին կարևորություն ներկայացնող պատասխանների համարները

Հայոց P.12. Սկզբում հարցնել տնտեսական, այնուհետև քաղաքական ոլորտի մասին: Մի քանի պատասխանի դեպքում դասավորել պատասխանները ըստ կարևորության` սկսելով 1-ից:

Հայոց P.13 Հատկացված վանդակում գրել 5 բալանի սանդղակով գնահատված բալը ներկայացնող թիվը

Հայոց P.16 Աղյուսակի բոլոր տողերում պետք է լինեն նշումներ, ընդ որում մեկ տողում միայն մեկ նշում: Ընտրվածները վերցնել օղակի մեջ:

### Բաժին S. Սոցիալական ինստիտուտներ

Հայոց S1. Աղյուսակի բոլոր տողերում պետք է լինեն նշումներ, ընդ որում մեկ տողում միայն մեկ պատասխան: Ընտրված պատասխանը վերցնել օղակի մեջ:

Հայոց S. 3-ի պատասխանները նշվում են աղյուսակի S-3-ի առաջին սյունակում օղակի մեջ առնելով այն ինստիտուտների համարները, որոնք հարցվողը ճանաչում է:

### Բաժին C Տնտեսական իրավիճակ

Հարց C3 Ընդհանուր ընտանեկան բնույթի (ընտանեկան նպաստ, ընտանեկան օգնություններ և այլն) եկամուտների գրանցման համար դրանց մեծությունը բաժանվում է տ/տ-ն անդամների թվին (նեռարյալ անչափահասներին) և ստացված գումարը ավելացվում յուրաքանչյուր անհատական բնույթի (հաշմանդամության, ծնողազրկության) եկամտի մեծությանը, եթե այդիսին չկա, ստացվածը պարզապես նշվում է տվյալ անդամի տողում: Այն բոլոր դեպքերում եթե տ/տ-ը ունի ընդհանուր ընտանեկան բնույթի եկամուտ (ընտանեկան նպաստ, ընտանեկան օգնություններ և այլն) աղյուսակի առաջին սյունում պետք է նշվեն տ/տ բոլոր անդամները:

**Քարտերից օգտվելու կարգը**

Նշված տեղերում քարտերի օգտագործումը պարտադիր է: Որպեսզի գրուցավարը ստիպված չլինի պատասխանները մեկ առ մեկ և մի քանի անգամ ընթերցել, հարցվողին ցույց է տալիս պատասխանների բոլոր տարբերակները պարունակող քարտը: Ջրուցավարը կարդում հարցը և հարցվողին տալիս է համապատասխան համարի քարտը: Հարցվողը ընտրում է իրեն հարմար տարբերակը և ընթերցում պատասխանի տեքստը: Եթե հարցվողը ունի տեսողության հետ կապված խնդիրներ, կամ այլ պատճառով չի կարողանում կարդալ, գրուցավարը պարտավոր է բարձրաձայն ընթերցի քարտի վրա գրվածը:

**Քիշի աղյուսակների կիրառման կարգը**

Քիշի աղյուսակները կցվում են յուրաքանչյուր հարցաթերթիկին:

Կան 8 տիպի Քիշի աղյուսակներ: Դրանց քանակը հետևյալն է՝

- A – հարցաթերթիկների օգտագործվող քանակի 1/6-ը
- B1 - հարցաթերթիկների օգտագործվող քանակի 1/12
- B2 - հարցաթերթիկների օգտագործվող քանակի 1/12
- C - հարցաթերթիկների օգտագործվող քանակի 1/6
- D - հարցաթերթիկների օգտագործվող քանակի 1/6
- E1 - հարցաթերթիկների օգտագործվող քանակի 1/12
- E2 - հարցաթերթիկների օգտագործվող քանակի 1/12
- F - հարցաթերթիկների օգտագործվող քանակի 1/6

**Աղյուսակից օգտվելու կարգը**

1. Լրացվում է Աղյուսակ A2-ի (6) սյունը՝ Առաջին տողում գրվում է ընտանիքի ամենաավագ տղամարդու համարը (Աղյուսակ A1-ի (1) սյան համարը), որից հետո՝ մնացած տղամարդկանց համարները՝ ըստ տարիքի նվազման: Տղամարդկանց համարները լրացնելուց հետո լրացվում է ընտանիքի ամենաավագ կնոջ համարը, որից հետո մնացած կանանց համարներն՝ ըստ նվազման:
2. ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՂՅՈՒՍԱԿԻՑ ընտրվում է հարցվողը հետևյալ կանոններով՝ այդ աղյուսակի առաջին սյունում վերցվում է այն տողը, որում գրված թիվը հավասար է ընտանիքի անդամների քանակին: Դրա կողքի սյունում գրված թիվը ցույց է տալիս թե ընտանիքի ո՞ր անդամն է լինելու հարցվողը, այն է՝ A2 աղյուսակի (6) սյան համապատասխան տողում գրված համարով անդամը: